ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«29» Դեկտեմբեր 2024թ. N 1127-Ա

ՀՐԱՄԱՆ

«Մ. ԲՈՒԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

ՊԱՐԶՎԵՑ

<u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Մ. Բուատ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կապալառու) 31.08.2022 թվականին կնքվել է N «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/5Ս-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Կապալառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված Մ-3, Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ137+100 Պուշկինի թունելի պահպանման աշխատանքները և որի շրջանակներում Կապալառուի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանին համապատասխան և սահմանված ժամկետներով:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ իրականացվող հսկողության ընթացքում պարբերաբար արձանագրվել են դեպքեր, երբ Կապալառուն պատշաճ չի իրականացնում Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

Մասնավորապես, 2024 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Կապալառուի կողմից անընդմեջ թույլ են տրվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 07-ի N 710-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 10-րդ կետի N 1 աղյուսակով նախատեսված թերությունները.

1. 2024 թվականի փետրվարի 2-ին արձանագրվել են հետևյալ թերությունները՝ թունելի ա/բ ծածկի փոսերի առկայություն (թերությունը վերացվել է 42 օր 15 ժամ ուշացումով), թունելի երթևեկամասում ոչ մաքուր վիճակ (թերությունը վերացվել է սահմանված ժամկետից 1 ժամ ուշացումով),
2. 2024 թվականի մարտի 15-ին արձանագրվել են թունելի ա/բ ծածկի փոսերի առկայություն (թերությունը վերացվել է 6 ժամ ուշացումով), թունելի վաքերում, ջրահեռացման առուներում թերություններ (թերությունը վերացվել է 5 օր 19 ժամ հետո), նշագծման բացակայություն (թերությունը վերացվել է 42 օր 19 ժամ ուշացումով), թունելի լուսավորության թերություն (թերությունը վերացվել է 11 օր 18 ժամ ուշացումով), թունելի երթևեկամասում ոչ մաքուր վիճակ (թերությունը վերացվել է 5 օր 10 ժամ ուշացումով),
3. 2024 թվականի մարտի 21-ին արձանագրվել է փոսեր երթևեկամասում (Կապալառուն էլ. փոստի միջոցով տեղեկացրել է, որ շտկել է թերությունը, սակայն նույն օրը Պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի կողմից արձանագրվել է նույն թերությունը / արձանագրված թերության համար՝ 4496 /)
4. 2024 թվականի մարտի 27-ին, ապրիլի 18-ին և 30-ին կրկին արձանագրվել են թունելի ա/բ ծածկի փոսերի առկայություն, փոսեր երթևեկամասում:

Կապալառուի կողմից 2024 թվականի 3 ամիսների ընթացքում անընդմեջ թույլ են տրվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանով հաստատված առաջին հավելվածի 10-րդ կետի N 1 աղյուսակով նախատեսված՝ վերը նշված թերությունները և սահմանված ժամկետներում չեն վերացվել: Թերություններն արձանագրվել են «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածով: Արձանագրված թերությունների համար Կապալառուի կատարողականներից կատարվել են նվազեցումներ (կատարված նվազեցումները Կապալառուի կողմից չեն վիճարկվել, ինչը ևս փաստում է թերությունների առկայությունը):

Հունվար

Երթևեկամաս և մայթեր - Երթևեկամասի և մայթերի վրա ձյան և սառույցի առկայություն	10%
Թունելային շինություններ և կահավորանք - Մայթերի և պաշպանիչ գոտու եզրաքարերի նշագծված չլինելը	1%
Նվազեցված գումարը	321.711 դր.

Փետրվար

Երթևեկամաս և մայթեր - 1000 քառ.մ ծածկի մակերեսի վրա 5 քառ.մ ավելի փոսերի առկայություն	3%
Նվազեցված գումարը	87.739 դր.

Մարտ

Երթևեկամաս և մայթեր - Երթևեկամասի և մայթերի վրա աղբի, ավելորդ առարկաների առկայություն, պատերի վրա մրի ու փոշու առկայություն	10%

Ջրահեռացման համակարգ - ջրթող խողովակներում տիղմի և լցվածքների առկայություն	3%
Օդափոխության, լուսավորման, կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգեր - Պահանջվող լուսավորության ոչ պատշաճ ապահովում	25%
Նվազեցված գումարը	1.111.364 դր.

Պայմանագրի 2.4 կետի 2.4.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

Պայմանագրի Տեխնիկական բնութագրի՝ թունելների պահպանման հիմնական տեխնիկական պահանջների 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն թունելի և կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների, համակարգերի ընթացիկ նորոգման և խնամքի աշխատանքների հիմնական նպատակն է կանխել դրանց ժամանակից շուտ մաշվածությունը: Այդ նպատակով Կապալառուն պարտավոր է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ վերացնելով վնասվածքներն ու անսարքությունները: Որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ Կապալառուն պարտավոր է իրականացնել թունելի լվացման, աղբի, ձյան և սառույցի հեռացման, հակահրդեհային համակարգի, օդափոխության համակարգի, լուսավորման համակարգի, կապի և ազդանշանային համակարգի, թունելային շինությունների և կահավորանքի, երթևեկամասի և մայթերի (այդ թվում՝ թունելի երկու ճակատամուտքերից հաշված՝ 100 մետր երկարությամբ երթևեկամասի և մայթերի հատվածքներ) շահագործման համար անհրաժեշտ վիճակում գտնվելու ապահովման, թունելի պատերի և կամարի վրա առաջացած թերությունների (ճաքերի և վնասվածքների) վերացման աշխատանքներ, իսկ ձմեռվա սեզոնին իրականացնել նաև թունելի պատերի, առաստաղի և հատակի վրա սառցաբեկորների և սառցալեզվակների հեռացում:

Թունելի հիմնական տարրերի և կոնստրուկտիվ համակարգերի պահպանման հիմնական տեխնիկական պահանջների 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ փոսերի առկայությունը 1000քմ ծածկի վրա պետք է լինի ոչ ավելի, քան 5քմ:

Նույն կետի «ե» ենթակետի համաձայն՝ թունելի երթևեկամասը և մայթերը շաբաթական առնվազն 2 անգամ, իսկ պատերն ամսական մեկ անգամ պետք է լվացվեն մրից ու փոշուց՝ հակահիդեհային համակարգի միջոցով կամ ջրցան մեքենայով:

Թունելի հիմնական տարրերի և կոնստրուկտիվ համակարգերի պահպանման հիմնական տեխնիկական պահանջների 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ օրական առնվազն մեկ անգամ պետք է ստուգել լամպերի, վարդակների, խրոցների, վահանների առկայությունը և դրանց աշխատանքը, ինչպես նաև լուսավորման համակարգի ավտոմատ կառավարումը: Դրանց բացակայության կամ անսարքության դեպքում պետք է իրականացնել վերականգնման աշխատանքներ:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ Կապալառուն երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանով հաստատված առաջին հավելվածի 10-րդ կետի N 1 աղյուսակով նախատեսված թերությունները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում, ապա Պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

Հիմք ընդունելով, որ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի «գ» ենթակետի դրույթով՝ Նախարարությունը միակողմանի լուծում է «N ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/5Ս-1» ծածկագրով Պայմանագիրը:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Մասնակիցն ընդգրկվում է Ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգի N 526-Ն որոշման 33-րդ կետի 6-րդ ենթակետի և Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Կապալառուն խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Մ. Բուատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Հրամանը տրամադրվում է «Մ. Բուատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Կապալառուին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում ներառելու համար:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Մ. Բուատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5/24/2024

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ա. ԵՐԻՑՅԱՆ

ք. Երևան